Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 2-ի N 972 - Ն որոշման

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N 1.27**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**
**(ՏԳՏԴ ծածկագրեր՝ Q 86.10)**

_______________________________________________ _______________________

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

_______________________________ _______________________________

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

_______________________________ _______________________________

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝___20___թ.______________ավարտը՝ 20___թ.

_______________________________________________

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

______________________________________ ՀՎՀՀ ☐☐☐☐☐☐☐☐

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

________________________________________________________

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները (հեռախոսահամարը)

________________________________________________________ __________________

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝______տրված՝_____________________20____թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ ________________________________________________________________

____________________________________________________________________________________________________

## 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

| NN ը/կ | **Հարց** | **Պատասխան** |
|---|---|---|
| **1.** | Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| **2.** | Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող առանձնացված ստորաբաժանումները | |
| **3.** | Տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների թիվը | |
| **4.** | Տարեկան սպասարկվող պացիենտների միջին թիվը | |

**3. ՀԱՐՑԱՇԱՐ**
**ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ**

| NN ը/կ | Հարց | Հղում նորմատիվ իրավական ակտերին | Պատասխան | | | Կշիռ | Ստուգման մեթոդ | Մեկնաբա-նություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Այո | Ոչ | Չ/Պ | | | |
| **ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՍԵՆՔԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆԸ, ԳՈՒՅՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | | | | | | | |
| 1. | **Նոր կառուցվող և վերակառուցվող արտահիվանդանոցային** պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակեր-պությունում ապահովվում է առնվազն երկու (մեկը՝ անձ-նակազմի, մյուսը՝ պացիեն-տի համար) սանհանգույցի առկայություն՝ հագեցած ճկափողով հիգիենիկ ցնցուղով կամ հիգիենիկ այլ սարքավորումով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 19 | | | | 2.0 | դիտողական | |
| 2. | **Նոր կառուցվող և վերակառուցվող հիվանդանոցային բժշկական կազմակերպությունում** ապահովվում է | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 19 | | | | 2.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | յուրաքանչյուր 20 պացիենտին՝ մեկ սանհանգույց հագեցած ճկափողով հիգիենիկ ցնցուղով կամ հիգիենիկ այլ սարքավորումով | | | | | | | |
| **3.** | **Նոր կառուցվող և վերակառուցվող արտահիվանդանոցային** բժշկական կազմակերպությունում ապահովվում է երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ՝ փոքր նստատեղով, մանկական գիշերանոթով, ավագ տարիքի երեխաների համար՝ ըստ սեռերի առանձնացումով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 20 | | | | 2.0 | դիտողական | |
| **4.** | **Նոր կառուցվող և վերակառուցվող** շենքերում (սենքերում) առկա է | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 21 | | | | | | |
| 1) | հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների բաժանմունքում, բացի քիմիաթերապիայի և հեմոդիալիզի, վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքներից յուրաքանչյուր 10 մահճակալին | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 21, աղյուսակ 1 | | | | 2.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | առնվազն 1 լվացարան՝ սանհանգույցից ոչ ավել, քան 5 մետր հեռավորության վրա հիվանդասենյակի սանհանգույցում՝ 1 լվացարան | | | | | | | |
| 2) | քիմիաթերապիայի, հեմոդիալիզի բաժանմունքներ բաժանմունքի 4 բաց կետում (ընդհանուր սրահում միջնապատերով առանձնացված տարածք)՝ 1 լվացարան, 1 փակ կետում՝ 1 լվացարան | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 21, աղյուսակ 1 | | | | 2.0 | դիտողական | |
| 3) | անհետաձգելի բուժօգնության բաժանմունք բաժանմունքի յուրաքանչյուր փակ կետում (ընդհանուր սրահում միջնա-պատերով առանձնացված փակվող տարածք)՝ 1 լվացարան բաժանմունքի յուրաքանչյուր 4 բաց կետում (ընդհանուր սրահում միջնապատերով առանձնացված տարածք)՝ 1 լվացարան | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 21, աղյուսակ 1 | | | | 2.0 | դիտողական | |
| 4) | վերակենդանացման բաժանմունքի յուրաքանչյուր փակ կետում (ընդհանուր սրահում միջնապատերով առանձնացված փակվող տարածք)՝ 1 լվացարան բաժանմունքի յուրաքանչյուր 2 բաց կետում (ընդհանուր | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 21, աղյուսակ 1 | | | | 2.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սրահում միջնապատերով առանձնացված տարածք)՝ 1 լվացարան | | | | | | | |
| **5.** | Տարածքները, որտեղ աշխատում են իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ, կազմակերպված չեն հղիների կամ երեխաների համար նախատեսված սենյակներին կից | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 22 | | | | 1.0 | դիտողական | |
| **6.** | **Նոր կառուցվող և վերակառուցվող բժշկական կազմակերպությունում** ապահովվում է մեկ մահճակալին մեկ պացիենտ հարաբերակցությունը և մահճակալների միջև 1 մետր հեռավորությունը, բացառությամբ՝ անհետաձգելի բուժօգնության բաժանմունքի, ինֆեկցիոն վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքի, ինտենսիվ թերապիայի բաժանմունքի կամ սենյակների, որտեղ մահճակալների միջև ապահովվում է 2.5 մետր հեռավորություն | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 23 | | | | 1.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **7.** | **Նոր կառուցվող և վերակառուցվող բժշկական կազմակերպությունում** բուժանձնակազմի համար նախատեսված է հանդերձարան՝ յուրաքանչյուր բուժաշխատողին ապահովելով պահարանով: | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 24 | | | | 1.0 | դիտողական | |
| **8**. | Կառուցվածքային սենքերի, միավորների, սենյակների, կաբինետների, բաժինների և բաժանմունքների տեղակայման շենք-շինությունների ներքին շինարարական կոնստրուկցիաները, հատակն ու պատերը  առանց կարերի են, խոնավ մաքրման ենթակա, մաքրող և ախտահանող նյութերի նկատմամբ դիմացկուն | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 28 | | | | 2.0 | դիտողական | |
| **9.** | Լուսատուները ներկառուցված և ամրացված են՝ փոշու ներթափանցումը կանխելու համար | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 28 | | | | 1.0 | դիտողական | |
| **10.** | Օդատարները, խողովակները հատակով և պատերով անցնում են հերմետիկ՝ կրծողների ու միջատների մուտքը կանխելու համար | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 29 | | | | 1.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **11.** | Բացովի պատուհանները, որոնք օգտագործվում են բնական մղումով ներհոս օդափոխման համար, ցանցապատված են մանրավանդակ ցանցով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 30 | | | | 1.0 | դիտողական | |
| **12.** | Վիրահատարանի պատերը և առաստաղը ներկված են բաց գույնի յուղաներկով կամ հակասեպտիկ ջրակայուն ներկով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 33 | | | | 1.0 | դիտողական | |
| **13.** | Բժշկական կազմակերպությու-նում ներքին հարդարման թերությունները (առաստաղների վրա ջրի հոսքերի հետքեր, խոնավության հետքեր, ճեղքերի և խոռոչների առկայություն, պոկված սալիկներ, հատակի ծածկի ամբողջականության խախտում) վերացվում են անմիջապես՝ ընթացիկ կամ հիմնական վերանորոգման միջոցով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 34 | | | | 1,0 | դիտողական | |
| **14.** | Ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանք-ների ժամանակ բաժան-մունքների գործունեությունը դադարեցվում է: Գործող շենքում թույլատրվում են իրականացնել վերանորոգման աշխատանքներ, եթե հնարավոր է գործող բաժանմունքը | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 4, կետ 35 | | | | 1,0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մեկուսացնել վերանորոգման աշխատանքներ ծավալած բաժանմունքից | | | | | | | |
| ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ | | | | | | | | |
| **15.** | Բժշկական կազմակերպության ղեկավարի հրամանով բժշկական կազմակերպությունում նշա-նակված է վարակի կանխարգել-ման և հսկողության պատասխա-նատու և ստեղծված է վարակի հսկողության հանձնաժողով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 5, կետ 36 | | | | 1.0 | փաստաթղթային | |
| **16.** | Վարակի հսկողության հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա համար մշակում է վարակի կանխարգելման և հսկողության ծրագիր, որը հաստատված է բժշկական կազմակերպության ղեկավարի հրամանով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 5, կետ 38 | | | | 1.0 | փաստաթղթային | |
| **17.** | Իմունականխարգելման ենթակա այն բուժաշխա-տողները, որոնք չունեն փաստագրված պատվաստում վիրուսային հեպատիտ Բ-ի, դիֆթերիայի, կարմրուկի, համաճարակային պարօտիտի (խոզուկ), ջրծաղիկի, սեզոնային գրիպի, կորոնավիրուսային հիվան-դության դեմ կամ տվյալ վարակիչ հիվանդությունով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 5, կետ 41 | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հիվանդացման փաստ կամ հեպատիտ Բ-ի պարագայում արյան մեջ վիրուսային հեպատիտ Բ-ի մակերեսային հակածնի դեմ հակամար-մինների <10 ՄՄ/մ մակարդակի առկայություն, բացառությամբ դիֆթերիայի, սեզոնային գրիպի, կորոնավիրուսային հիվանդության, պատվաստվում են համաճարակաբանական ցուցումով՝ Պատվաստումների ազգային օրացույցով սահմանված դեղաչափերով | | | | | | | |
| 1) | վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ պատվաստվում են վիրաբույժները, մանկաբարձ-գինեկոլոգները, ստոմատոլոգները, միջամտություն կատարող և պատվաստում իրականացնող բուժաշխատողները, արյան փոխներարկման և հեմոդիալիզի, նարկոլոգիական, լաբորատորիաների բուժաշխատողները, ինչպես նաև այն բուժաշխատողները, որոնք մասնագիտական գործունեության հետ կապված շփվում են արյան, դրա բաղադրամասերի և կենսաբա-նական հեղուկների հետ | ենթակետ 1 | | | | 3.0 | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2) | դիֆթերիայի, կարմրուկի, համաճարակային պարոտիտի (խոզուկ), ջրծաղիկի, սեզոնային գրիպի, լիազոր մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտով սահմանված դեղաչափով կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստվում են բոլոր բուժաշխատողները | ենթակետ 2 | | | | 2.0 | փաստաթղթային | |
| **18.** | Բժշկական հակացուցումներ ունեցող բուժաշխատողները գործատուին ներկայացնում են պատվաստման բժշկական հակացուցումների փաստը հավաստող բժշկական փաստաթուղթ՝ տրված առողջության առաջնային պահպանման ծառայություններ իրականացնող բժշկի կողմից | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 5, կետ 42 | | | | 1.0 | փաստաթղթային | |
| **19.** | Տվյալ վարակիչ հիվանդու-թյունով հիվանդացած բուժաշխատողները, բացառությամբ դիֆթերիայի, սեզոնային գրիպի, կորոնավիրուսային հիվանդության, գործատուին ներկայացնում են հիվանդացման փաստը հավաստող բժշկական փաստաթուղթ՝ տրված առողջության առաջնային պահպանման ծառայություններ իրականացնող բժշկի կողմից | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 5, կետ 42 | | | | 1.0 | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **20.** | Պատվաստված բուժաշխատողը գործատուին ներկայացնում է պատվաստումը հավաստող «Կանխարգելիչ պատվաստումների քարտ» | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 5, կետ 43 | | | | 1.0 | փաստաթղթային | |
| **ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՄԱՆՆ ՈՒ ԱԽՏԱՀԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | | | | | | | |
| **21.** | Բժշկական կազմակերպության համաճարակաբանը կամ վարակի հսկողության պատասխանատուն մաքրման և ախտահանման աշխատանք իրականացնող բուժանձնակազմին, աշխատանքի ընդունվելիս և տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ հրահանգավորում է, որի մասին կազմվում է արձանագրություն՝ հրահանգավորված բուժաշխատողի ստորագրությամբ | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 44 | | | | 1.0 | փաստաթղթային | |
| **22.** | Բժշկական կազմակերպությունում օգտագործվում են մակնշված կամ գունային կոդավորում ունեցող մաքրող պարագաներ (սայլակ, տարա, մոպ)՝ համապատասխան տվյալ բաժանմունքի գործառնական նշանակությանը և պահվում են մաքրող պարագաների համար բաժանմունքում առանձնացված հատվածում, հատուկ | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 46 | | | | 1.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նշանակության սենքերում կամ աշխատասենյակներից դուրս տեղակայված պահարանների մեջ | | | | | | | |
| **23.** | Օգտագործված մաքրման պարագաներն ախտահանում են ախտահանիչ միջոցների աշխատանքային լուծույթներով, որից հետո լվանում են ջրով և չորացնում | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 46 | | | | 1.0 | դիտողական հարցում | |
| **24.** | Հատակի և պատերի համար նախատեսված մաքրման պարագաները առանձնացված են ըստ օգտագործման նշանակության՝ գունային կոդավորմամբ | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 46 | | | | 1.0 | դիտողական | |
| **25.** | Բաժանմունքներում մաքրող և ախտահանիչ միջոցները պահվում են դրանց համար նախատեսված հատուկ վայրերում՝ դարակաշարերի վրա | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 47 | | | | 2.0 | դիտողական | |
| **26.** | Ախտահանիչ միջոցների աշխատանքային լուծույթները պահվում են հերմետիկ կափարիչներով, համապատասխան մակնշմամբ (ախտահանիչ միջոցի անվանում, նշանակություն, խտություն, պատրաստման ամիս, ամսաթիվ, պիտանելիության ժամկետ), | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 47 | | | | 2.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կոռոզիայի նկատմամբ կայուն, առանց վնասվածքների տարաների մեջ | | | | | | | |
| **27.** | Բժշկական կազմակերպությունում մաքրում և ախտահանում կատարվում է ախտահանիչ միջոցներով՝ կիրառելով ախտահանիչներ, որոնք ունեն կից մեթոդական ուղեցույց՝ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով: | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 48 | | | | 2.0 | դիտողական | |
| **28.** | Արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունում շրջակա միջավայրի մաքրումն ու ախտահանումն իրականացվում է՝ | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 49, աղյուսակ 2 | | | | | | |
| 1) | սպասասրահի հաճախակի հպման մակերեսները, հատակը մաքրվում է օրական առնվազն մեկ անգամ (24 ժամվա ընթացքում) և ըստ անհրաժեշտության | աղյուսակ 2 | | | | 1.0 | հարցում, դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2) | խորհրդատվական (զննության) սենյակի հաճախակի հպման մակերեսները, հատակը մաքրվում և ախտահանվում են օրական առնվազն երկու անգամ, | աղյուսակ 2 | | | | 1.0 | հարցում, դիտողական | |
| 3) | միջամտությունների կաբինետի, վիրակապարանի, վիրաբուժական փոքր միջամտությունների (օրինակ՝ վերքի կարում, թարախակույտի դրենավորում) սենքերի բոլոր մակերեսները, որոնք շփվում են պացիենտի հետ, և հատակը, հատկապես պացիենտի գոտին և միջամտությունների սեղանը մաքրվում և ախտահանվում են յուրաքանչյուր միջամտությունից առաջ և հետո | աղյուսակ 2 | | | | 1.0 | հարցում, դիտողական | |
| 4) | միջամտությունների կաբինետի, վիրակապարանի, վիրաբուժական փոքր միջամտությունների (օրինակ՝ վերքի կարում, թարախակույտի դրենավորում) սենքերի բոլոր մակերեսները և ողջ հատակը, ձեռքերի լվացարանները մաքրվում և ախտահանվում են աշխատանքային օրվա ավարտին | աղյուսակ 2 | | | | 1.0 | հարցում, դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5) | այլ սենքերը՝ չչփվող մակերեսները մաքրվում են կանոնավոր (շաբաթական, ամսական) և տեսանելի աղտոտվածության դեպքում | աղյուսակ 2 | | | | 1.0 | հարցում, դիտողական | |
| **29.** | Հիվանդանոցային և ցերեկային ստացիոնարի պայմաններում բժշկական օգնություն և սպա-սարկում իրականացնող կազ-մակերպություններում շրջակա միջավայրի մաքրումն ու ախտա-հանումն իրականացվում է՝ | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6 կետ 50, աղյուսակ 3 | | | | | | |
| 1) | բաժանմունքի հիվանդասենյակ, բացի ինֆեկցիոն բաժանմունքի հիվանդասենյակից և մեկուսարանից բարձր ռիսկի շփման մակերեսներ և հատակ, լվացարաններ օրական առնվազն մեկ անգամ | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |
| 2) | պացիենտի անձնական խնամքի իրեր, անկողնային պարագաներ, բոլոր մակերեսները (օրինակ՝ ներքնակ, մահճակալի շրջանակ, օդափոխիչ, անվասայլակի բռնակ, սարքավորումների կառավարման վահանակ, մոնիտորի ստեղնաշար, լույսի անջատիչ, դռան բռնակ), ինչպես նաև հատակը պացիենտի տեղափոխումից կամ դուրսգրումից հետո | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3) | ընդհանուր օգտագործման սանհանգույցի բոլոր մակերեսները՝ հիվանդասենյակից դուրս (պացիենտների, այցելուների համար) օրական առնվազն երկու անգամ | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |
| 4) | վիրահատարանում բոլոր հորիզոնական մակերեսները, մինչ վիրահատարան մտնելը՝ պացիենտի խնամքի շարժական սարքավորումները, որոնք չեն պահվում վիրահատարանում՝ առաջին վիրահատությունից առաջ | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |
| 5) | վիրահատարան բոլոր մակերեսները, հատակը, վիրաբուժական հարմարանքների վերին մասերը, վիրահատական լամպերի արտացոլող մասը, անզգայացման սարքը, վիրահատական սեղանը վերևից ներքև՝ վերջին վիրահատությունից հետո | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |
| 6) | վիրահատարանի բոլոր մակերեսները, հատակը՝ պլանավորված (շաբաթական, ամսական) | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7) | վիրահատարանի հաճախակի շփման բոլոր մակերեսները, հատակը մակերես օրական առնվազն երկու անգամ և ըստ անհրաժեշտության | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |
| 8) | միջամտությունների կաբինետի մակերեսները, հատակը՝ յուրաքանչյուր միջամտությունից առաջ և հետո աշխատանքային օրվա ավարտ | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |
| 9) | մեկուսարանի և ինֆեկցիոն բաժանմունքի հիվանդասենյակների բոլոր մակերեսները՝ օրական առնվազն երկու անգամ և ըստ անհրաժեշտության | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |
| 10) | մեկուսարանի և ինֆեկցիոն բաժանմունքի հիվանդասենյակներ պացիենտի անձնական խնամքի իրեր, անկողնային պարագաներ, բոլոր մակերեսները (օրինակ՝ ներքնակ, մահճակալի շրջանակ, օդափոխիչ, անվասայլակի բռնակ, սարքավորումների կառավարման վահանակ, մոնիտորի ստեղնաշար, լույսի անջատիչ, դռան բռնակ), ինչպես նաև հատակը պացիենտի տեղափոխումից կամ դուրսգրումից հետո | աղյուսակ 3 | | | | 3.0 | հարցում դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **30.** | Վիրահատարանի, վիրակապարանի, միջամտությունների սենյակի, կենտրոնական մանրէազերծման բաժանմունքի (ախտահանման բաժին) կամ դրա բացակայության դեպքում մանրէազերծման սենքի, սանհանգույցների ախտահանման և խոնավ մաքրման վերաբերյալ կատարվում են գրանցումներ սենքերի մաքրման և ախտահանման թերթիկում<br>**Ձև 1** | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 51 | | | | 3.0 | դիտողական, փաստաթղթային | |
| **31.** | Վիրահատարանում, վիրակապարանում, ինտենսիվ թերապիայի, վերակենդանացման, հեմոդիալիզի բաժանմունքներում, միջամտությունների կաբինետում, կենտրոնական մանրէազերծման բաժանմունքում (ախտահանման բաժնում) կամ դրա բացակայության դեպքում մանրէազերծման սենքում, մեկուսարանում յուրաքանչյուր ախտահանումից հետո իրականացվում է օդի վարակազերծում՝ այդ նպատակի համար թույլատրված սարքավորումներով՝ կիրառելով կամ բաց և համակցված ուլտրամանուշակագույն | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 52, 1-ին, 2-րդ ենթակետեր | | | | 3.0 | դիտողական | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ճառագայթիչներ, կամ մարդկանց բացակայության պայմաններում՝ ցողացրիչների, օզոնի գեներատորների, օզոնի ազդեցությամբ մանրէասպան զտիչների կիրառմամբ: | | | | | | | | |
| **32.** | Մանրէասպան ՈՒՄ ճառագայթիչ սարքի աշխատանքի հսկման վերաբերյալ կատարվում է գրանցում՝ գրանցամատյանում **Ձև 2** | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 53 | | | | 2.0 | փաստաթղթային | |
| **33.** | Մանկական բաժանմունքում նախատեսվում են խաղասենյակներ, որոնց հաճախակի հպման մակերեսները, հատակն օրական առնվազն մեկ անգամ և ըստ անհրաժեշտության մաքրվում և ախտահանվում են | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 6, կետ 54 | | | | 2.0 | դիտողական, լաբորատոր | |
| **ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ, ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏԻ ԼՎԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | | | | | | | | |
| **34.** | Բժշկական կազմակերպությունում անկողնային պարագաների, վիրահատարանի, վիրակապարանի, վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, մեկուսարանի բուժաշխատողների արտահագուստի լվացման գործընթացն իրականացվում է բժշկական կազմակերպության | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 7, կետեր 55, 56 | | | | 1.0 | փաստաթղթային, դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կառուցվածքում գործող կենտրոնացված լվացքատանը կամ պայմանագրային հիմունքներով | | | | | | | |
| **35.** | Բժշկական կազմակերպությունում նախատեսված են մաքուր և կեղտոտ սպիտակեղենի պահման կենտրոնացված սենքեր կամ պահարաններ | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 7, կետ 57 | | | | 1.0 | դիտողական | |
| **36.** | Մաքուր սպիտակեղենը բաժանմունքում պահվում է առանձին սենքում կամ պահարանում (կարելի է ներկառուցված)՝ օգտագործված սպիտակեղենից առանձին, ջրակայուն դարակաշարերի վրա, հատակից առնվազն 20 սմ բարձրության վրա | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 7, կետ 57 | | | | 1.0 | դիտողական | |
| **37.** | Անկողնային սպիտակեղենը փոխվում է 7 օրը մեկ և ըստ անհրաժեշտության | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 7, կետ 58 | | | | 1.0 | դիտողական | |
| **38.** | Սպիտակեղենի տեղափոխումը լվացքատուն և լվացքատնից բաժանմունքներ իրականացվում է փաթեթավորված վիճակում, մեկանգամյա օգտագործման | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ | | | | 1.0 | դիտողական | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պոլիէթիլենային կամ բազմակի օգտագործման պարկերով, այդ նպատակի համար հատկացված սայլակներով՝ հատուկ փոխադրամիջոցների օգնությամբ | 7, կետ 58 | | | | | | | |
| **39.** | Օգտագործված սպիտակեղենի անվտանգ գործածության նպատակով կիրառվում են գունային պիտակով մակնշված տոպրակներ **Ձև 3** | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 7, կետ 60 | | | | 1.0 | դիտողական | |
| **40.** | Անկողնային պարագաները (ներքնակ, բարձ, վերմակ) պացիենտի դուրսգրումից կամ մահանալուց հետո, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, ենթարկվում են խցիկային ախտահանման: Խցիկային ախտահանում չի պահանջվում, եթե ներքնակները պատված են ախտահանման ենթակա հիգիենիկ ծածկով: Խցիկային ախտահանման անհնարինության դեպքում բարձը և վերմակը ենթարկվում են լվացման բարձր ջերմաստիճանում: Կտորե պարկերը լվանում են սպիտակեղենի հետ միասին: | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 7, կետ 61 | | | | 1.0 | հարցում դիտողական | |
| **41.** | Բժշկական կազմակերպության լվացքատանը ապահովվում է լվացման գործընթացի հոսքայնությունը՝ բացառելով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի | | | | 1.0 | դիտողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մաքուր և կեղտոտ հոսքերի խաչաձևումը: Յուրաքանչյուր բաժանմունքի համար առանձնացվում են մակնշված լվացքի մեքենաներ | N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 7, կետ 62 | | | | | | |
| **ԿԱԹԵՏԵՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | | | | | | | |
| **42.** | Կենտրոնական երակային և զարկերակային կաթետերների տեղադրման ժամանակ օգտագործում են մանրէազերծ պարագաներ | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 8, կետ 63 | | | | 3.0 | դիտողական | |
| **43.** | Ծայրամասային երակային կաթետերը տեղադրվում է, այնուհետև ամրացվում կպչուն սպեղանիով, որի վրա նշվում է տեղադրման ամիսը, ամսաթիվը և ժամը<br>Կաթետերի տեղադրման տեղը զննվում է պարբերաբար, առնվազն օրական մեկ անգամ՝ կաթետերով պայմանավորված վարակի վաղ ախտանշանների հայտնաբերման նպատակով | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 8, կետ 64 | | | | 3.0 | դիտողական հարցում | |
| **44.** | Կաթետերը փոխվում է ըստ անհրաժեշտության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պացիենտի մոտ առկա է անոթների մուտքի սահմանափակում<br>Կաթետերն անհապաղ հեռացվում է, եթե տեղադրված հատվածում առկա է | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 8,  կետ 65 | | | | 3.0 | դիտողական հարցում | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կարմրություն, ցավ, այտուց, արտադրություն (թարախային կամ ոչ թարախային) | | | | | | | |
| **45.** | Թրոմբի առկայության, ինչպես նաև ներանոթային սարքերով պայմանավորված վարակների կասկածի դեպքում, ախտորոշման նպատակով՝ հեռացված կաթետերը ուղարկվում է մանրէաբանական հետազոտության, հեռացված կաթետերի ծայրից մանրէազերծ մկրատով կտրվում է մեկից մեկուկես սանտիմետր և տեղադրվում է մանրէազերծ փորձանոթի մեջ, նմուշն անմիջապես տեղափոխվում է մանրէաբանական լաբորատորիա՝ հետագա լաբորատոր հետազոտություն իրականացնելու համար | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 8, կետ 66 | | | | 3.0 | դիտողական հարցում | |
| **46.** | Կաթետերը հեռացնելուց հետո նոր կաթետերը տեղադրվում է այլ հատվածում: Մեծահասակի և երեխայի նշանակման թերթիկի մեջ նշվում է ծայրամասային և կենտրոնական կաթետերի տեղադրման տեղը, ամիսը, ամսաթիվը և վերջինիս հանման ամիսը, ամսաթիվը, ինչպես նաև | Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրաման, հավելված, բաժին 1, գլուխ 8, կետ 67 | | | | 3.0 | դիտողական հարցում փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տեղադրող և հանող բուժաշխատողի անուն, ազգանունը | | | | | | | |
